ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս օրենքով սահմանված կարգով վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը պետական տուրքի հարցը համարում է լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.02.2023 թվականին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասով թիվ 2 որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայտը մերժելու, «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և այդ մասով պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**